



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԲԱՂԱԲԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ  
ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԴԴ, 2001, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59: Դեռ.՝ (+374 322) 4 22 68, Էլ. հասցե՝ [hcav@hcav.am](mailto:hcav@hcav.am)  
Էլ. էջ [www.hcav.am](http://www.hcav.am), [www.hrfori.am](http://www.hrfori.am)

---

2008 թ. ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ  
ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ  
19 ՓԵՏՐՎԱՐԻ, 2008



## 2008թ. նախագահական ընտրությունների քվեարկության դիտարկումների նախնական արդյունքներ

43 ընտրատեղամասերում դիտորդների կողմից իրականացված քվեարկության դիտարկումները թույլ են տալիս եզրակացնելու, որ 2008թ. նախագահական ընտրությունների քվեարկությունն անցել է օրենսդրությամբ սահմանված կարգի էական խախտումներով:

Քվեարկությունն ընթացել է այնպիսի մթնոլորտում, որը ընտրողների վրա հոգեբանական ճնշում է գործադրել՝ նրանց դեպի հատուկ նախանշված թեկնածուի օգտին քվեարկելուն ստիպելու նպատակով: Ընտրատեղամասային հանձնաժողովները թեև սահմանված է եղել ՀՀ «Ընտրական օրենսգրքի» համաձայն, սակայն ընտրական հանձնաժողովների և վստահված անձանց կազմը տեղամասերում բովանդակային առունով եղել է միատար: Սա նպաստել է, որ ընտրատեղամասերում քվեարկության կարգի այնպիսի խախտումները, որոնք կարող են էական ազդեցություն թողնել ընտրությունների արդյունքների վրա, հանձնաժողովի կողմից չի կանխվել:

Մասնավորապես.

- ընտրատեղամասերում իրականացվել է բաց քվեարկություն կամ ընտրողները քվեարկելուց հետո փորձել են հանձնաժողովի հատուկ անդամների կամ վստահված անձանց ցույց տալ, թե ում օգտին են քվեարկել:
- Ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող անձանց ոչ թե օգնել են, այլ նրանց փոխարեն փաստացի քվեարկել են այլ անձինք: Նման դեպքեր տեղամասերում գրանցվել են տվյալ տեղամասում քվեարկությանը մասնակցած անձնաց թվի 10 տոկոսի չափով:
- ընտրատեղամասային հանձնաժողովի կազմում եղել են միևնույն ընտանիքի, նույն աշխատանքային կոլեկտիվի անդամներ, որոնք թեև ներկայացված են եղել դատարանի, ՀՀ նախագահի կողմից, երբեմն նույնիսկ ՀՀ-ի ՕԵԿ կուսակցությունների, սակայն իրենց գործողություններով աջակցել են Հայաստանի Հանրապետական կուսակցության ներկայացուցիչներին:

19-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը դիտորդություն է իրականացրել Լոռու մարզի 43 ընտրատեղամասերում:

### 29/01 թիվ 3 գիշերօթիկ դպրոց

- Ժամը 15:20-ի սահմաններում եղել է կուտակում, հանձնաժողովի նախագահը դիտորդի դիտողությունից հետո հատուկ միջոցառումներ է ձեռնարկել կուտակումը կանխելու նպատակով:
- Հանձնաժողովի նախագահը կնիքը հանելուց անմիջապես հետո թանաքոտել է՝ չստուգելով կնիքի չոր լինելը:
- Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձը ժամը 09:05-ի սահմաններում հերթականությամբ վերցրել է ընտրողների անձնագրերը և նայել, դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը կանխել է խախտումը:
- Հանձնաժողովի նախագահը Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձի իրավունքն է խախտել՝ չտրամադրելով տեղեկություն արդեն քվեարկած ընտրողների քանակի վերաբերյալ:

### 29/03 5-րդ դպրոց



## ՀԵԼԵՆԻԿՅԱՆ ԲԱՂԱԲԱՑԻՎԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ

### ԳՐԱՍԵՆՅԱԿ

77, 2001, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59: 7եռ.՝ (+374 322) 4 22 68, Էլ. հասցե՝ [hcav@hcav.am](mailto:hcav@hcav.am)  
Էլ. էջ [www.hcav.am](http://www.hcav.am), [www.hlori.am](http://www.hlori.am)

- 13:30-ի սահմաններում տեղամասային հանձնաժողովի նախագահ Վ. Եխշատյանն ինքն է փոխարինել քվեարկության ծրարները կնքող և անձնագրերի վերջին էջը դրոշմակնքող հանձնաժողովի անդամին: Այդ ընթացքում մի քաղաքացու անձնագրում դրոշմակնիք չի դրվել: Դիտորդը պահանջել է արձանագրել խախտումը, նախագահը հրաժարվել է: Դիտորդը կազմել հատուկ կարծիք, սակայն հանձնաժողովի նախագահը չի ստորագրել:
- 10:00-ց մինչև 13:00-ն ընտրատեղամասում կուտակումներ են եղել, դիտորդի միջամտությամբ հանձնաժողովի նախագահը սկսել է քվեարկողներին մեկ-մեկ թողնել ներս:
- քվեախցիկները դրված են եղել սեղանին՝ դեմքով դեպի հանձնաժողովը, քվեախցիկների ներքևի մասը բաց է եղել և քվեարկելիս քաղաքացիները քվեաթերթն այնպես են պահել, որ քվեարկությունն երևացել է:

#### 29/10 թիվ 40 մանկապարտեզ

- Տեղամասում պարբերաբար ներկա են գտնվել կողմնակի անձինք, սկզբում հանձնաժողովի նախագահը ոչինչ չի արել, և միայն, երբ դիտորդը ներկայացրել է իր դիտորդությունները, նախագահը դուրս է հրավիրել, սակայն հրաժարվել է արձանագրություն կազմել:
- Տեղամասում միաժամանակ ներկա է գտնվել Սերժ Սարգսյանի երկու անձ, որի վերաբերյալ ևս նախագահն արձանագրություն չի կազմել և դուրս է հրավիրել, միայն դիտորդի դիտողությունից հետո:
- Ընտրողներն առանց քվեաթերթիկները ծրարում տեղավորելու դեպի դուրս ծալած դուրս են գալիս քվեախցերից:

#### 29/11 թիվ 30 դպրոց

- 12:40-14:00 միանգամից քվեարկության է մասնակցել 273 մարդ, որի հետևանքով տեղամասում կուտակումներ են եղել:
- 14:00-ի մոտերը մի քաղաքացի է ներկայացել քվեարկության ու բողոքել, որ իր անձնագիրը տարել են խոստանալով, որ փող կտան: Նույն ձևով երեկոյան 17:30-ի տեղամաս է ներկայացել մեկ այլ կին: Վերջինիս մի տղամարդ դուրս է տարել, հետո միասին ներս են եկել, նույն կինը քվեարկելուց հետո փորձել է ցույց տալ, որ ինքը խոսքի տերն է:
- Քվեաթերթիկները հաշվելիս դիտորդն արձանագրել է, որ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմ քվեարկած 1 թերթիկ դրված է Սերժ Սարգսյանի փաթեթում: Սերժ Սարգսյանի քվեաթերթիկների փաթեթը վերահաշվարկելուց հետո պարզվել է, որ Լևոն Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկած ևս 6 թերթիկ հաշվել են Սերժ Սարգսյանի օգտին:

#### ուշագրավ փաստեր

- Քվեաթերթիկի վրա մի քաղաքացի նշել է.«Ինձ փող չեն տվել, ոչ մեկին չեն ընտրելու»:

#### 29/29 թիվ 2 միջնակարգ դպրոց

- Ընտրական տեղամասից 40մ հեռավորության վրա փակցված են եղել Սերժ Սարգսյանի նախընտրական պաստառները, դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը խանութի աշխատողին դիմել է պաստառները հանելու համար: Հանձնաժողովի նախագահը մերժել է: Դիտորդի կողմից կազմվել է արձանագրություն:



# ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԲԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ

## ԳՐԱՍԵՆՅԱԿ

77, 2001, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59: Հեռ.՝ (+374 322) 4 22 68, Էլ. փոստ՝ [hcav@hcav.am](mailto:hcav@hcav.am)  
Էլ. էջ [www.hcav.am](http://www.hcav.am), [www.hrfori.am](http://www.hrfori.am)

- «07» տաքսի ծառայության աշխատակիցները քաղաքացիներին տեղափոխել են ընտրական տեղամասեր:
- Ընտրողների մի մասը խցիկում քվեարկելուց հետո առանց քվեաթերթիկը ծրարի մեջ դնելու մոտեցել է քվեատուփի մոտ: Հանձնաժողովի նախագահը քայլեր չի ձեռնարկել նման դեպքերը կանխարգելելու համար:
- Անչափահաս քաղաքացին փորձել է օգնել ընտրել իր տատիկին և պապիկին: Դիտորդի դիտողությունից հետո կանխվել է:
- Մի ընտրող քվեախցիկից դուրս գալուց հետո հանձնաժողովի անդամներին է մոտեցել, ցույց տվել քվեաթերթիկը և բարձրաձայն արտասանել, թե ում է ընտրել:
- Ոչ սահմանված նշումով քվեաթերթիկը ճանաչվել է վավեր Սերժ Սարգսյանի վստահված անձի արձագանքից հետո:
- Ծեր ընտրողը դիտորդին խոստովանել է, որ ընտրության գալիս իրեն 5000 դրամ են տվել:

### 29/08 թիվ 17 միջնակարգ դպրոց

- Ձիվորական համազգեստով մի քաղաքացի քվեարկելուց հետո հեռախոսով նկարել է իր քվեաթերթիկը ու դուրս եկել:
- «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ի դիտորդը աշխատել է Ս.Սարգսյանի օգտին:
- 0532 Լ պետհամարանիշով միկրոավտոբուսն անընդհատ քաղաքացիների է տեղափոխել ընտրական տեղամաս:
- Ժամը 10:45-ին 2334 Լ պետհամարանիշով միկրոավտոբուսը քաղաքացիներին տեղափոխել է տեղամաս:
- Ժամը 10:45-ին տեղամասում 15-ից ավելի ընտրող է եղել, այդ նույն ժամին կուտակումներ է եղել նաև բակում:
- Ժամը 13:00-ին ընտրական տեղամասում եղել է 23 ընտրող:
- Ժամը 13:10-ին ընտրողներից մեկը բաց է քվեարկել:

### 30/02 թիվ 18 միջնակարգ դպրոց

- Նիստը բացվել է 7:17 ռոպեին:
- «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ի դիտորդը թիվ 18 դպրոցի ռազմագիտության ուսուցիչն էր, իսկ դպրոցի տնօրենը հանձնաժողովի նախագահը:
- «Ֆրիտյոֆ Նանսենի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն»-ի դիտորդը Գառնիկ Աքուլյանը, խորհրդարանական ընտրություններին ԲՀԿ-ի նախընտրական շտաբի պետ է եղել, այժմ աշխատում էր Սերժ Սարգսյանի համար:
- Վստահված անձինք և վերը նշված դիտորդները ժամանակ առ ժամանակ մոտենում էին ընտրության եկած քաղաքացիներին, զրուցում նրանց հետ, «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեա» ՀԿ-ի դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը կանխեց երևույթը, սակայն ժամանակ առ ժամանակ դա էլի կրկնվում էր:
- Վստահված անձինք զանգում էին իրենց ծանոթ ընտրողներին և կանչում ընտրելու:
- Մի քաղաքացի բարձրաձայն հայտնել է, թե ում է ընտրելու, դեպքի վերաբերյալ արձանագրություն չի գրվել:
- Ընտրողներից մեկը առանց քվեախցիկ մտնելու քվեաթերթիկի վրա նշում է կատարել, արձանագրություն չի կազմվել:
- Ժամը 16:30-ից տեղամասում մեծ կուտակումներ են եղել:
- 18:50-ին մի քաղաքացի ցանկացել է ընտրել անձնագրային բաժնից վերցրած տեղեկանքով, որը չէր հանդիսանում 9-րդ ձև, դիտորդի դիտողությունից հետո խախտումը կանխվել է:



- Արդյունքներն ամփոփելիս 4 անվավեր քվեաթերթիկ ճանաչվել են վավեր, 2 քվեաթերթիկը Սերժ Սարգսյանի օգտին է եղել, 2-ը՝ Արթուր Բաղդասարյանի:
- Ժամը 20:00-ից հետո տեղամասում, բացի ոստիկաններից ներկա է եղել նաև դպրոցի պահակը:
- Տեղամասում պարբերաբար ներկա գտնվող քաղաքացիներից մեկը սպառնացել է ընտրողներից մեկին:
- Քաղաքացիներն ընտրության գալուց առաջ անձնագրերը ձեռքներին մտել են մոտակայում գտնվող Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբ, նոր մտել տեղամաս քվեարկելու:
- Մի քաղաքացի, որը աշխատում էր Ս.Սարգսյանի նախընտրական շտաբում ընտրելուց հետո իր հետ ընտրության եկած մոտ 4 հոգու անձնագրերը հավաքել է՝ ասելով, որ կտանի շտաբ հետո շենքում կտա իրենց անձնագրերը: «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեա» ՀԿ-ի դիտորդին ասել է, որ իրենց այդպես են ասել:

### 30/14 թիվ 5 մանկապարտեզ

- Քվեարկության եկած քաղաքացին ներկայացել է Սերժ Սարգսյանի բուկլետը ձեռքին ու բացատրել, որ այսօր շտաբում են տվել, ու ասել, որ չմոռանա՝ ում ընտրի: Դիտորդի պահանջով կազմվել է արձանագրություն:
- Քվեարկությունից հետո քաղաքացու անձնագրում դրոշմակնիք չի դրվել: Կազմվել է արձանագրություն:

### 30/18 թիվ 9 միջնակարգ դպրոց

- Ընտրական տեղամասում պարբերաբար ներկա են գտնվել կողմնակի անձինք:
- Ընտրական տեղամասում եղել են կուտակումներ, հանձնաժողովի նախագահն այդ կապակցությամբ ձեռնարկել է հատուկ միջոցառումներ:
- Նախագահի՝ տեղամասում ներկա չլինելու և քվեաթերթիկների նոր հարուրյակ չտրամադրելու պատճառով քվեարկությունն ավելի քան 10 րոպեով դադարեցվել է:
- 2 քվեաթերթիկի ետևում առկա է եղել հանձնաժողովի միայն 2 անդամի ստորագրությունը, հանձնաժողովի 3-րդ անդամը ստորագրել է և հանձնել քվեաթերթիկն ընտրողին:
- Ընտրական տեղամասում ներկա են եղել միևնույն վստահված անձի 2 ներկայացուցիչ, ինչը կանխվել է հանձնաժողովի նախագահի կողմից:

### 30/22 1-ին երաժշտական դպրոց

- Տեղամասում միաժամանակ ներկա են եղել Սերժ Սարգսյանի երկու վստահված անձինք: Դիտորդը դիտողություն է արել նախագահին, որից հետո մեկը դուրս է եկել:
- Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձը քվեախցերին մոտ է կանգնած եղել, այնքան, որ հնարավոր է եղել տեսնել քվեարկությունը: Նախագահը դիտողություն է արել, սակայն վստահված անձը չի հեռացել: Նախագահն արձանագրություն է կազմել քվեարկության կարգի խախտման վերաբերյալ, և նրան դուրս արել:

### 30/27 թիվ 1 միջնակարգ դպրոց



- Հանձնաժողովի նախագահը կնիքը հանելուց անմիջապես հետո թանաքոտել է՝ չստուգելով կնիքի չոր լինելը: Վստահված անձի կողմից պահանջվել է արձանագրություն գրել, սակայն հանձնաժողովի նախագահը չի կազմել:
- Մոտավորապես ժամը 11:30-14:30-ի սահմաններում 2 միկրոավտոբուսով՝ մեկը դեղին պետհամարանիշով, ընտրողներին տեղափոխել են ընտրական տեղամաս և առաջացել են կուտակումներ: Ոչ մի միջոցառում կուտակումը կանխելու համար չի ձեռնարկվել:

### 30/29 թիվ 3 դպրոց

- Ընտրական տեղամասում 1 ժամից ավելի եղել է կուտակում, նույնիսկ 30 ընտրողից ավելի ընտրող է միաժամանակ եղել տեղամասում, հանձնաժողովի նախագահը ոչ մի համապատասխան միջոց չի ձեռնարկել կուտակումը կանխարգելելու համար:
- Հանձնաժողովի նախագահը դրոշմակնքել է անձնագրի կազմը:
- Քվեաթերթիկների ամփոփման ժամանակ Սերժ Սարգսյանի օգտին քվեարկված քվեաթերթիկների մեջ վստահված անձը նկատել է առանց նշումի քվեաթերթիկ, որը հաշվվել է որպես նրա օգտին քվեարկած ձայն: Դիտորդն առաջարկել է վերստուգել քվեաթերթիկները, սակայն քվեարկությանը հանձնաժողովը նման որոշում չի կայացրել: Նույն քվեաթերթիկների մեջ դիտորդը հայտնաբերել է մեկ չսահմանված նմուշի քվեաթերթիկ, որը հաշվվել է Սերժ Սարգսյանի օգտին: Քվեաթերթիկը Սերժ Սարգսյանի օգտին քվեարկած ձայների ընդհանուր թվից չի հանվել:
- 29 ընտրական տեղամասում հանձնաժողովի նախագահը սահմանափակվել է դիտորդի և վստահված անձանց տեղաշարժման իրավունքը:
- Ընտրական տեղամասում մի քանի անգամ ներկա են գտնվել այլ անձինք, որոնք դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահի կողմից դուրս են հրավիրվել:
- Մի քվեախցիկում դիտորդի կողմից արձանագրվել է 3 ընտրողի միաժամանակյա քվեարկություն:
- Հանձնաժողովի նախագահը կնիքը հանելուց անմիջապես հետո թանաքոտել է՝ չստուգելով կնիքի չոր լինելը:
- Ընտրական տեղամասում միաժամանակ ներկա են գտնվել Սերժ Սարգսյանի 2 վստահված անձ:
- Հանձնաժողովի նախագահն անընդհատ շրջել է քվեախցիկների մոտ և մեկ-երկու անգամ նայել է քվեախցիկի մեջ, ընտրողներից մի քանիսն էլ դրսում բողբել են, որովհետև նրանց կարծիքով նախագահը տեսել է, թե ում են իրենք ընտրել:

### 30/33 Վանաձորի մշակույթի պալատ

- 12:00-16:00 քաղաքացիներին խմբերով քվեարկության են հատուկ միկրոավտոբուսներով 06ԼՍ, որի պատճառով տեղամասում կուտակումներ են առաջացել: Դիտորդի դիտողությանը նախագահը կարգավորել է, և ներս է թողել մեկ-մեկ:
- 15:30-16:00 մի քաղաքացի քվեարկել է անձնագրի պատճենով, դիտորդի պահանջով այս փաստն արձանագրվել է:
- Առավոտյան 8:00 մինչև 18:40-ն ընկած հատվածում տեղամասում միաժամանակ ներկա են գտնվել Սերժ Սարգսյանի երկու վստահված անձ:
- 12:00-16:00-ն քաղաքացիները քվեախցիկներից դուրս են եկել քվեաթերթիկները դեպի դուրս ծալած, առանց ծրարների մեջ տեղավորելու, քվեատուփի մեջ գցելուց առաջ փորձել են ցույց տալ Սերժ Սարգսյանի վստահված անձին: Դիտորդը դիտողություն է ներկայացրել, սակայն արձանագրություն չի կազմվել:
- Տեղամասի լուսամուտից 12:00-16:00-ն ընկած հատվածում քվեարկությանը հետևել են երկու անձինք:



### 31/03 թիվ 25 միջնակարգ դպրոց

- Ընտրողներից մի քանիսը խցիկում քվեարկելուց հետո առանց քվեաթերթիկը ծրարի մեջ դնելու մոտեցել է քվեատուփին, հանձնաժողովի նախագահի կողմից ձեռնարկվել է հատուկ միջոցառում խախտումը կանխելու նպատակով:
- Մի ընտանիքից 2 անձ փորձել են միաժամանակ մի քվեախցիկում քվեարկել, դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը կանխել է խախտումը:
- Ընտրողներից մեկը, որը հանդիսացել է այլ տեղամասի հանձնաժողովի անդամ, մեկ այլ ընտրողի ցույց է տվել իր՝ արդեն Սերժ Սարգսյանի օգտին քվեարկած քվեաթերթիկը և ասել «Տես, թե որտեղ պիտի քվեարկես»:
- Հանձնաժողովի քարտուղարի՝ Խաչատրյան Նվարդի սեղանին դրված է եղել Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագիրը: Դիտորդի դիտողությունից հետո գրքույկը վերցրել են սեղանից:
- Հանձնաժողովի նախագահի կողմից խախտվել է վստահված անձի և դիտորդի տեղաշարժման իրավունքը:
- Առավոտյան ժամը 10:30-12:30-ի սահմաններում գոյացել են կուտակումներ: Իրավապահ մարմինների կողմից կանխվել է քաղաքացիների կողմից՝ ուժ գործադրելով տեղամաս մտնելը:

### 31/05 թիվ 25 դպրոց

- Սերժ Սարգսյանի օգտին քվեարկած քվեաթերթիկների մեծ մասը ծալած են եղել դեպի դուրս:

### 31/15 թիվ 8 միջնակարգ դպրոց

- 2 ընտրող չեն թույլատրել կնիքել իրենց անձնագրում:

### 31/24 գյուղ Դեբեդ

- Քվեախցիկի վերևում ամրացված է եղել էլեկտրական լար՝ փոքր լուսավորիչ սարքով: Դրա առկայությունը հոգեբանական ճնշում է առաջացրել, և կարող էր մեկնաբանվել որպես փոքր տեսախցիկ: Վստահված անձինք, դիտորդները մի քանի անգամ առաջարկել են հանել այն կամ գոնե ծածկել, քանի որ միևնույն է միացված չէ, և լույս չի տալիս: Հանձնաժողովի նախագահը մերժել է:

### ուշագրավ փաստեր

- տեղամասում քվեարկել է 507 մարդ, որից 48-ն ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չի ունեցել, որի առնչությամբ հանձնաժողովի նախագահն արձանագրություն է կազմել

### 31/25 գյուղ Եղեգնուտ



- Հանձնաժողովի նախագահին անընդհատ տարբեր ժեստերով խոսացել է համազյուղացիների հետ:
- Տեղամասում միաժամանակ ներկա են գտնվել Սերժ Սարգսյանի վստահված 2 անձինք:

### 31/35 Ալավերդի

- Հանձնաժողովի նախագահը կնիքը բացելուց հետո հնարավորություն չի տվել ներկաներին ստուգել արդյոք կնիքը չոր է, թե ոչ: Դիտորդի դիտողությամբ այդ կապակցությամբ կազմվել է արձանագրություն:

Փետրվարի 19-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը ժամը 18:00-ի դրությամբ Լուռու մարզի տարբեր ընտրատեղամասերից դիտորդների քվեարկության կարգի վերաբերյալ ահազանգերի կապակցությամբ հաղորդումներ է ուղարկել թիվ 29, 30, 31 ընտրատարածքային հանձնաժողովներին և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

Մասնավորապես՝

- թիվ 29/08 ընտրատեղամասում տեղի են ունեցել կուտակումներ: Ընտրական տեղամասում գտնվել է մոտ 50 մարդ և իրավիճակը դարձել է անվերահսկելի:
  - Թիվ 29/21 ընտրատեղամասում տեղի է ունեցել բաց քվեարկություն: Բոլոր քվեարկողները քվեարկելուց հետո հրապարակավ ցուցադրել են քվեաթերթիկը, նոր տեղավորել ծրարում: Մեր ահազանգից հետո ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից միջամտություն չի եղել և բաց քվեարկությունը շարունակվել է: Սերժ Սարգսյանի վստահված անձը հատուկ գրիչներ է տրամադրել ընտրողներին և հետ վերցրել ընտրելուց հետո: Երկու քաղաքացիներ այլ անձնագրերով ստացել են քվեաթերթիկներ, կատարել են նշումը, սակայն արկղը գցելուց առաջ տվյալ փաստը նկատվել է դիտորդի կողմից, այնուհետև հանձնաժողովի անդամը թույլ չի տվել քվեաթերթիկը գցել արկղը:
  - Թիվ 29/23 ընտրատեղամասից ահազանգ ենք ստացել, որ քվեաթերթիկները հանվել են ընտրատեղամասից և տեղափոխվել գյուղապետարան:
  - Թիվ 30/29 ընտրական տեղամասում սահմանափակել են մեր դիտորդի տեղաշարժման իրավունքը:
  - Թիվ 30/29, 30/27, 30/09, 30/10 ընտրական տեղամասում տեղի են ունեցել կուտակումներ: Տվյալ փաստը ֆիքսվել է մեր դիտորդների կողմից: Հանձնաժողովի նախագահները ոչ մի համապատասխան միջոց չեն ձեռնարկել կուտակումները կանխելու համար:
  - Թիվ 30/25 ընտրական տեղամասում մեր դիտորդները արձանագրել են մի քվեախցում երկու հոգու միաժամանակյա քվեարկություն:
- Կենտրոնական Ընտրական հանձնաժողովին ուղարկվել են 2 հաղորդումներ:
- Թիվ 32/02 ընտրատարածքում դիտորդական առաքելություն իրականացնող մեր դիտորդի նկատմամբ կիրառվել են ճնշումներ, որոնց հետևանքով մեր դիտորդը ստիպված է եղել լքել ընտրատարածքը:
  - Թիվ 31/15 ընտրատեղամասում տեղի է ունեցել անձնագրի մեջ առանց կնիքի քվեարկության 2 դեպք, որը ֆիքսվել է մեր դիտորդի կողմից, սակայն հանձնաժողովի կողմից արձանագրություն չի կազմվել:
  - Թիվ 31/45 ընտրատարածքում դիտորդական առաքելություն է իրականացրել «Ընտրությունը Քոնն է» ՀԿ-ն ներկայացնող Գյուլնարա Ֆրունզիկի Ռամազյանը /դիտորդական վկայական Գ1762/, որը միաժամանակ հանդիսանում է ՀՀ-ի անդամ: ՀԿ Վանաձորի գրասենյակը առաջարկել է դադարեցնել «Ընտրությունը Քոնն է» ՀԿ-ի դիտորդական առաքելությունը և նրանց անդամներին դուրս հրավիրել ընտրական տեղամասերից: